Կիրթլենդի տաճարը կառուցելու համար կատարված զոհաբերություններ

Բաժին 95-ը ստանալուց անմիջապես հետո Հայրում Սմիթը սկսեց մաքրել տարածքը, որտեղ պետք է կառուցվեր տաճարը: Տաճարի կառուցումը դժվար խնդիր էր: Այդ տարածքում ընդամենն ապրում էր Եկեղեցու մոտ 150 անդամ: Նրանք այդքան մեծ շինությունը վերահսկելու փորձ ու հմտություններ չունեին: Տաճարի կառուցումը նաև ֆինանսական ծանրաբեռնվածություն կստեղծեր Եկեղեցու և անդամների համար: Այնուամենայնիվ, նրանք գործի անցան, և Տերը կատարեց Իր խոստումը, որ նրանք «այն կառուցելու զորություն կունենան» (Վարդապետություն և Ուխտեր 95.11): Արտեմուս Միլեթը, որը նորադարձ էր Կանադայից և փորձառու որմնադիր, տեղափոխվեց Կիրթլենդ և վերահսկեց շինարարությունը: Մեկ այլ նորադարձ՝ Ջոն Թանները, ֆինանսական օգնություն ցուցաբերեց ճգնաժամային պահին: Այդ տարածքի տղամարդիկ, կանայք և երեխաները նվիրաբերեցին իրենց ժամանակը, աշխատանքը և միջոցները՝ տաճարը կառուցելու համար: (Տես Լիզա Օլսեն Թեյթ և Բրենթ Ռոջերս, «Մեր Աստծո տունը», *Հայտնություններ համատեքստում* [2016], 167, *Սրբեր*, հատոր 1, *Ճշմարտության դրոշը*, 210–11):

- Սրբերը ի՞նչ զոհաբերություններ կատարեցին՝ Կիրթլենդի տաճարը կառուցելու համար: Այդ զոհաբերությունների մեջ ի՞նչն է տպավորում ձեզ:
- Մենք ի՞նչ զոհաբերություններ կարող ենք անել՝ Տիրոջ տուն հաճախելու համար:

Կիրթլենդի տաճարը կառուցելու համար կատարված զոհաբերություններ

Բաժին 95-ը ստանալուց անմիջապես հետո Հայրում Սմիթը սկսեց մաքրել տարածքը, որտեղ պետք է կառուցվեր տաճարը: Տաճարի կառուցումը դժվար խնդիր էր: Այդ տարածքում ընդամենն ապրում էր Եկեղեցու մոտ 150 անդամ: Նրանք այդքան մեծ շինությունը վերահսկելու փորձ ու հմտություններ չունեին: Տաճարի կառուցումը նաև ֆինանսական ծանրաբեռնվածություն կստեղծեր Եկեղեցու և անդամների համար: Այնուամենայնիվ, նրանք գործի անցան, և Տերը կատարեց Իր խոստումը, որ նրանք «այն կառուցելու զորություն կունենան» (Վարդապետություն և Ուխտեր 95.11): Արտեմուս Միլեթը, որը նորադարձ էր Կանադայից և փորձառու որմնադիր, տեղափոխվեց Կիրթլենդ և վերահսկեց շինարարությունը: Մեկ այլ նորադարձ՝ Ջոն Թանները, ֆինանսական օգնություն ցուցաբերեց ճգնաժամային պահին: Այդ տարածքի տղամարդիկ, կանայք և երեխաները նվիրաբերեցին իրենց ժամանակը, աշխատանքը և միջոցները՝ տաճարը կառուցելու համար: (Տես Լիզա Օլսեն Թեյթ և Բրենթ Ռոջերս, «Մեր Աստծո տունը», *Հայտնություններ համատեքստում* [2016], 167, *Սրբեր*, հատոր 1, *Ճշմարտության դրոշը*, 210–11):

- Սրբերը ի՞նչ զոհաբերություններ կատարեցին՝ Կիրթլենդի տաճարը կառուցելու համար: Այդ զոհաբերությունների մեջ ի՞նչն է տպավորում ձեզ:
- Մենք ի՞նչ զոհաբերություններ կարող ենք անել՝ Տիրոջ տուն հաճախելու համար:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_351-1